ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009 ք.Երևան, Կորյուն 17

«15» սեպտեմբերի 2022թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ժորա Արմենի Չիչոյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Դատավորի նշանակման կարգը» վերտառությամբ 117-րդ հոդվածի համաձայն՝

1. Թեկնածուի համաձայնության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը նրա թեկնածությունն առաջարկում է Հանրապետության նախագահին՝ ներկայացնելով նաև նրա անձնական գործը, թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա կողմից ներկայացված և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը:

2. Առաջարկությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում Հանրապետության նախագահն ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ առաջարկությունն առարկություններով վերադարձնում է Բարձրագույն դատական խորհուրդ:

3. Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությունն առարկություններով վերադարձվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է նիստ հրավիրել:

4. Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի առարկությունը չընդունելու հարցը քննարկում և որոշում է կայացնում խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Եթե Բարձրագույն դատական խորհուրդը չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ առաջարկությունը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ:

6. Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածի 2-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերում նշված գործողությունները, ապա համապատասխան թեկնածուին նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով, ինչի մասին Բարձրագույն դատական խորհրդի նախագահը եռօրյա ժամկետում հրապարակում է հայտարարություն դատական իշխանության պաշտոնական կայքում:

Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ ԲԴԽ-1Ե-7257 գրությամբ Հանրապետության նախագահի քննարկմանն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր նշանակելու համար Ժորա Չիչոյանի թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ» թիվ ԲԴԽ-83-Ո-275 որոշումը:

Հանրապետության նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի գրությամբ Բարձրագույն դատական խորհրդին են ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ ԲԴԽ-83-Ո-275 որոշման վերաբերյալ առարկություններ, որոնք քննարկվել են Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 8-ին հրավիրված նիստում և չեն ընդունվել:

Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ ԲԴԽ-1Ե-7431 գրությամբ կրկին Հանրապետության նախագահի քննարկման է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր նշանակելու համար Ժորա Չիչոյանի թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ» թիվ ԲԴԽ-83-Ո-275 որոշումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում Հանրապետության նախագահի կողմից Ժորա Արմենի Չիչոյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր նշանակելու վերաբերյալ հրամանագիր չի ընդունվել և համապատասխան դիմում չի ներկայացվել Սահմանադրական դատարան, Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 15-ին կայացած նիստի արդյունքների ամփոփմամբ՝ ***հայտարարվում է, որ Ժորա Արմենի Չիչոյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն իրավունքի ուժով ուժի մեջ է մտել 2022 թվականի սեպտեմբերի 15-ին:***

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. ՉԻՉՈՅԱՆ